որովհետև որքան մեծ է մարմինը, այնքան էլ մեծ է ջերմութեան կորուստը։

Նախապատմական հոկայամարմին կենդանիներից է դիպլոդոկը, որ պատկանում է մողէսաձևներին (գինոզաւր)։ որոնք վիթխարի սողուններ էին և ունէին այժմեան կենդանական թագաւորութեան մի քանի դատ խմբերի՝ մողէսների, կոկորդիլոսների, կաթնհաւունների և թռչունների յատկութիւնները։ Դիպլոդոկի երկարութիւնն էր 9 սաժէն, որի կէսը երկայն և ուժեղ ագին էր, որ ծառայել է ջրում լողալու և հաւանականաբար ցամաքի վրայ պաշտպանուելու համար։ կերակրուել է բուսեղէնով, շրջել է երկու յետին երկայն ոտների և պոչի օգնութեամբ։ ծանրութիւնը եղել է 1500 փութ։

Անհեռացած հոկայ կենդանիներից է և ալլոզաւրը 5 սաժէն երկայնութեամբ և աւելի զանգուածական մարմնով։ Սրա կմաղքը նիու-Եորկի թանգարանումն է, իրենից աւելի մեծ, բայց անպաշտպան բրոնտոզաւրի կմաղքի վրա նրան պատառոտելու դիրքում։ Այս հրեշի գլխի երկարութիւնն եղել է $1^1/_2$ արշին, ունեցել է զարհուրելի ատամներ։

Աւելի փոքր, բայց տարօրինակ ձև ունի նեոզաւրը. երկայնութիւնն է $1^1/_2$ սաժ. բարձրութիւնը $^3/_4$ սաժ. ունեցել է ուժեղ ծնօտ, ատամներ և 4 վերջոգաչափ ճիրաններ։ Այս երկակենցաղի կոլոր դուրս ընկած մէջքի վրայ տարածուում է լողաթաղանթը. սա ծակծուած է ամուր մաշկով, որի վրայ կան 30-ի չափ փշաձև ոսկրներ։

Վերջապէս այլանդակ կենդանիների շարքին են պատկանում նաև ցերատոպսիդները կամ եղջիւրաւոր սողունները, որոնք միւս մողէսաձևներից տարբերուում են նորանով, որ սրանց չորս վերջաւորութիւնն էլ հաւասարաչափ են զարգացած։

Еженедѣль, № 49-50)

ՆԱՄԱԿ

«Արարատ» ամսագրի յարգոյ խմբագրութեան

Ինչպէս արդէն յայտնի է հասարակութեան, Ներկայ թուականին լրացաւ Արժ. Եղնիկ ա. քահ. Երզնկեանի ուսուցչական գործունէութեան 35 ամեակը։

Նրա յարգողները ի պատիւ նրա բազմամեայ մանկավարժական ծառայութեան, որոշեցին, յանուն յօբելեանի, աջակցել նրա ձեռնարկած նոր օգտաւէտ գործին, այն է՝ «Հովիւ»

շաբաթաթերթի հրատարակութեան՝ մի համեստ ֆոնդ կազմելով այդ թերթի համար։

Ժողովուած գումարից կը վճարուի խմբագրութեան վրայ ծանրացած անցեալ պարտքը, իսկ մնացեալ մասը կը գործադրուի նոյն թերթի յառաջադիմութեան համար՝ կազմուած յանձնաժողովի բարեհայեցողութեամբ։

Ցոյս ունենք, որ հասարակութիւնը՝ մինչև Մայիս 25-ը կը շարունակէ իր աջակցութիւնը այդ խրախուսանքի արժանի գործի յաջողութեան։

Յանձնաժողովը, իր ժամանակին, մամուլի միջոցով մանրամասն հաշիւ կը ներկայացնէ յարգելի հասարակութեան։

Յանձնաժողովի Նախագահ՝ **Մ. Ս. Սալամբէկեանց**

Քարտուղար՝ **Սարգիս Սարկ. Բիակեանց**

Խնդրում ենք բոլոր գրութիւնները ուղարկել յանձնաժողովի նախագահին Михаилу Исаевичу Саламбекову – Тифлисъ. Тургеневская, д. Алелова, № 1.

Նուէրները՝ Յանձնաժողովի գանձապահին՝ Никалаю Захарьевичу Нариманову—Тифлисъ, Армямскій Базаръ. Соб. д. № 3.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. Ճանապարհորդական տպաւորութիւնք և համառօտ նկարագիր դէպքերի վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ. **Սուքիաս եպիսկոպոս Պարգեան** 1885 թ. Երևան, 1907. գինն է 60 կ.
2. **Գէորգ Զուբար.** Իմ զրոյցները. գիրք II. Նոր Նախիջևան, 1906. գինն է 50 կ.
3. **Արշակ Զօպանեան.** Քերթուածներ 1889—1907, Փարիզ, 1908 գինը 5 ֆր.
4. **Բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանց.** Բանաստեղծ քաղաքացին. 1908, Մոսկուա. գինը 10 կ.
5. **Բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանց.** Սեղրակ Մանդինեանը իբր տեսուչ Երևանի Հայոց թեմական Հոգևոր Դպրանոցի, Մոսկուա, 1907, գինը 50 կ.
6. **Ա. Տէր-Յարութիւնեան** Պռոշեան և նրա գրական գործունէութեան արժէքը. Ն. Նախիջևան, 1908, գինն է 25 կ.
7. **Դ. Վարուժան,** Ջարգը, 1895|6, Փարիզ, 1908. Գիննե 50 ս. գիմել Տիվիս, Գուտենբերգ դրատաճառանոցին